Արձանագրություն N 3
Տեղի համայնքապետարանի կարիքների համար ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03 ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Տեղ

23-ը փետրվարի 2026թ.,

ժամը՝ 17:00

Ընդունել ի գիտություն, որ Armeps համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 23.02.2026թ., ժամը 17:00-ին: Հրատապ բաց մրցույթ ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

- Ալվարդ Բաղդասարյանին (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

- Հարութ Դավթյանին (համակարգում՝ ԳՊ/ԳԱ և ԳՊ/ԲԱ)
- Լուսինե Մկրտչյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ և ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ Հարություն Հարությունյան

«ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Հ. Հարությունյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Armeps համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:
4. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունների շտկման հայտերի գնահաումն և որոշումների մասին
5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Հ. Հարությունյան)

1.1 Ըստ www.armeps.am կայքի տվյալների՝ Տեղի համայնքապետարանի կարիքների համար «նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանում
1.	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
2	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
3	«ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ
4	«ՄԱԼԿ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Armeps համակարգի միջոցով ներկայացված հայտերում հարվերով պահանջված փաստաթղթերի առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Հ. Հարությունյան)

2.1 **Armeps** համակարգի միջոցով ներկայացված բոլոր մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **փաստաթղթերը** առկա էին, բացառությամբ «ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի,որում բացակայում էր հրավերի 1-ին մասի 2.4.1 կետի 4-րդ ենթակետով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար՝ մասնակիցի կողմից ներկայացվող առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատած գրավոր համաձայնությունները:

2.2 «ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել է:

2.3 Վերը նշված մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի, քանի որ նա գտնվում է գնումներին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները

(Հ. Հարությունյան)

3.1 «ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով հրատապ բաց մրցույթ շրջանակներում **Armeps** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման արդյունքում մասնակիցների գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ՝ 1 *Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում* **Նախահաշվային գինը՝** 7 000 000		
	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	1 666 500	333 300	1 999 800
[redacted]			
«ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ	3 100 000	-	3 100 000
«ՄԱԼԿ» ՍՊԸ	4 900 000	980 000	5 880 000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ՝ 2 *Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում* **Նախահաշվային գինը՝** 3 000 000		
	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	665 000	133 000	798 000
«ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ	1 300 000	-	1 300 000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունների շտկման մասին.

(Հ. Հարությունյան)

4.1 ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով սույն արձանագրության 2.1, 2.2 և 2.3 կետերը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը **«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի** հայտը մերժել, իսկ 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 40-րդ և 41-րդ կետերը **«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի, «ՋԻ ԷՄ ԲԻ Գրուպ» ՍՊԸ-ի, «ՄԱԼԿ» ՍՊԸ-ի** հայտերը գնահատել բավարար և այդ բավարար գնահատված մասնակիցներից՝**«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել ընտրված մասնակից**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

4.2 ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին և 2-րդ չափաբաժիննռրի մասով անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը::

4.3 ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնի մասով անգործության ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը «Ճանապարհագիծ ինստիտուտ» ՍՊԸ -ին ծանուցել պայմանագրերի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10(տասը) տոկոսի չափով:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1 **«ՍՄ-ՏՀ-ՀԲՄԾՁԲ-2026/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել պայմանագիր չկնքելու հայտնի դառնալու հաջորդող առաջին աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Այուինքի մարզ, Տեղ համայնք, գ. Տեղ 35-րդ փողոց 2 հասցեում՝ Տեղի համայքապետարանում:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ալվարդ Բաղդասարյան

հանձնաժողովի գնահատող և բացող անդամներ՝ _____ Հարութ Դավթյան

_____ Լուսինե Մկրտչյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հարություն Հարությունյան